

կարգախօսը դարձրին արեւելահայ վերածննդ-
ները: Նազարեանից եւ Նալբանդեանից սկսած
մինչեւ Արծրունի եւ Ակնունի՝ այդ կարգա-
խօսն են մակադրած եղել իրենց հասարակա-
կան-մշակութային դրօշի վրայ ու նրա իրա-
դրժմանը նուիրել իրենց եռանդի եւ գործու-
նէութեան մի զգալի մասը: Մի եւրոպացի էր
ուրեմն, որ առաջին անգամ, սրաթափանց դի-
տողութեամբ, սահմանում էր հայ ժողովուրդ-
դի պատմական առաքելութիւնը եւ նրա վրայ
դարձնում նոյն այդ ժողովուրդի ղեկավարների
ուշադրութիւնը:

Բայց այս խնդրում եւս Արովեան իր ան-
ձով ու կեանքով պայծառ օրինակ է հանդի-
սացել Հաքատհաուզէնին:

Այս օտար մարդը խաւար Ասիայի մի ան-
կիր ընկած, իր էութեամբ ու ձգտումներով
եւրոպականացած, բայց եւ լաւագոյն հայը
մնացած այդ եղական մարդու՝ Արովեանի օ-
րինակով, ընդգծել է այն պատմական դերը,
որ վիճակում է Արովեաններ ծնող ժողովուրդ-
դին: Մեր անցեալին ու քաղաքակրթութեանը
վերահասու եւ իրազեկ դառնալու (դարձեալ
Արովեանի միջոցով եւ նրա օգնութեամբ) փառ-
տը եւս իր կողմից ամրապնդել է ականաւոր
գերմանացու մէջ իր այդ տեսութիւնը:

Այդ տեսութիւնը ուրեմն, բացառապէս,
օտար ծագում չունի (Հաքատհաուզէն), այլ
հաւասար չափով նաեւ՝ հայկական (Արովե-
ան):

Այսպէսով, 19-րդ դարի առաջին կիսի հայ
ներքին կեանքը ուսումնասիրելու տեսակէտից
ընդհանրապէս եւ Արովեանի նշանակութիւնը
բազմակողմանիօրէն գնահատելու տեսակէտից
մասնաւորապէս՝ առաջնակարգ աղբիւր է հան-
դիսանում Հաքատհաուզէնի աշխատութիւնը,
որ եւ կազմում է այս յօդուածի նիւթը:

* * *

Նախ մի երկու խօսք իր՝ Հաքատհաուզէնի
մասին:

Բարոն Աուգուստ ֆոն Հաֆստհաուզէն իր
Ժամանակի յայտնի գիտնականներից էր Պրու-
սիայում: Նրա գիտական աշխատութիւնները
նուիրուած են եղել գլխաւորապէս Պրուսիայի
հողային պայմանների ուսումնասիրութեան:
Հեղինակը մի հետազոտութիւն եւս ունի Ռու-
սաստանի հողային պայմանների մասին: Այդ

բանը նա կատարել էր, որպէս ծանօթ մասնա-
գէտ, Ժամանակի ուսումնականութեան յա-
տուկ հրաւերով:

1843-ի ամառը, օգոստոսի սկիզբին է լի-
նում, որ Հաքատհաուզէն Քերչից (Ղրիմ) մեկ-
նում է Անդրկովկաս՝ ուսումնասիրելու նրա
ժողովուրդների ներքին կեանքը: Թիֆլիսում
եւ Երեւանում նրան ուղեկցում եւ առաջնոր-
դում է Խաչատուր Արովեան:

Նոյն այդ թուականին Ներսէս Աշտարակե-
ցին ընտրուած է լինում կաթողիկոս: Վերջինիս
հետ Հաքատհաուզէն ծանօթանում է ու խօսում
Պետերբուրգում նոյն տարուայ ձմեռը, ուր
Քիշնեւից գնացել էր նորընտիր կաթողիկոսը,
նախ քան էջմիածին մեկնելը: Նրա Աշտարա-
կեցու պատկերով էլ զարդարել է հեղինակը իր
երկասիրութեան ճակատը:

Այդ գործը կրում է Անդրկովկաս վերնա-
գիւրը եւ բաղկացած է երկու հատորից: Անգ-
լիերէն հրատարակութիւնը աւելի շուտ է լոյս
տեսել (1849), քան՝ գերմաներէնը (Հայպիդ,
1856): Այն պարագան եւս, որ աշխատութիւնը
հրատարակուել է նաեւ Փրանսերէն եւ ուսե-
րէն թարգմանութիւններով, մի նոր ապացոյց
է նրա ներքին արժէքի: Նա թարգմանուել է
նաեւ հայերէն, Արիստակէս Եպիսկոպոս Սեդ-
րակեանի ձեռքով, բայց ոչ թէ բնագրից, այլ
ուսեւրէնից: (Էջմիածին, 1872): Դժբախտա-
բար դա էլ կատարուել է գրաբար լեզուով եւ ոչ
թէ աշխարհաբար:

Գուցէ եւ այս է պատճառը, որ Սեդրակե-
անի թարգմանութիւնը գրեթէ անծանօթ է
մնացել մեզնում, որով եւ Հաքատհաուզէնի աշ-
խատութիւնը չէ օգտագործուել, ըստ արժան-
ւոյն, հայ հետազոտողների կողմից:

Պէտք է ասել, որ Սեդրակեանի բարգմա-
նութիւնը իսկապէս որ շատ հազուադիւս եւ
գրեթէ չկարդացուած հրատարակութիւնների
չարքին է պատկանում: Հազիւ թէ մի քանի ան-
հատներից բացի եւ մի երկու դրաղարաններից
զուրս՝ ծանօթ լինի նա, թո՛ղ թէ օգտագոր-
ծուած:

Ասացինք, որ Հաքատհաուզէնի աշխատու-
թիւնը երկու հատորից է բաղկացած: Առաջին
հատորն է Հայաստանի եւ ժողովուրդի մասին
տեղեկութիւններ պարունակում, մասնաւորա-
պէս նրա 6-րդից մինչեւ 10-րդ գլուխները, ու